12-18 ՀՈՒՆԻՍ 2026 ՈՒՐԲԱԹ 021(5889)

Azg Վազ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Թուրքիայի ՆԳ նախարարը կոչ է արել ազատագրել Երուսաղեմը

Թուրքիայի ներքին գործերի նախարար Մուստաֆա Չիֆթչին իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության համաժողովում կոչ է արել «ազատագրել» Երուսաղեմը: «Ինչպես տեսանք Դամասկոսի, Հալեպի եւ Ղարաբաղի ազատագրումը, այնպես էլ Աստծո կամքով մի օր կտեսնենք Երուսաղեմինը: Ինչպես անցյալում, այս հողերը կրկին մեզ կպատկանեն: Քաղաքը պիտի վերադարձվի Թուրքիայի վերահսկողությանը»: Հրեական ԶԼՄ-ները հունիսի 8-ին զետեղել են Իսրայելի ԱԳՆ, ՊՆ-ի քննադատությունը Չիֆթչիի X -ում հրապարակված ելույթին: «Երուսաղեմը հավերժ կմնա Իսրայելի մայրաքաղաքը: Երուսաղեմը Կոստանդնուպոլիս չէ, եւ Իսրայել պետությունը քայքայվող խաչակրաց կայսրություն չէ»: Իսրայելը «ուժեղ եւ վճռական պետություն է, որը ապացուցել է իրեն պաշտպանելու կարողությունը բոլոր սպառնալիքներից»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Azg Վազ
Azg Տարեգիրք
Արեւ Թերթ
Զարթօնք Օրաթերթ
Նոր Աշխարհ
Կիրակնօրեայ Հայրենիք
Semanario Armenio SARDARABAD ՍԱՐՏԱՐԱՊԱՏ
The Armenian Mirror-Spectator

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկատի ունենալով մինչեւ Յունիսի 9-ը բացայայտուած ընտրական տուեալները՝ ՌԱԿեան համադրուած մամուլը կը յայտարարէ.

Բացառապէս ձգտուած մթնոլորտի մը մէջ՝ Հայաստանի Ազգային ժողովի համապետական ընտրութիւնները տեղի ունեցան կիրակի Յունիսի 7-ին:

Ընտրութեանց վերջնական արդիւնքները տակաւին յայտնի չեն: Անոնք ենթակայ են տարբեր ընտրական կանոններու խախտման հետեւանքով կատարուող վերաքննութեանց:

Հետեւաբար մեր այս յայտարարութեամբ, կ'ուզենք արժամեայ եւ սակայն բաւականին որոշ արդիւնքներով, նշել հետեւեալը. քուէներու առաւելութեան շարքով խորհրդարան պիտի անցնին «Քաղաքացիական պայմանագիր», «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինք, «Բարգաւաճ Հայաստան» եւ հաւանաբար նաեւ «Միասնութեան թեւեր» խմբաւորումները:

Մինչ որոշ է, թէ Նիքոլ Փաշինեանի գլխաւորած ՔՊ-ն պիտի կարենայ կազմել կառավարութիւնը, սակայն սահմանադրական փոփոխութիւններ կատարելու իր կարողութիւնը հաւանաբար պիտի ըլլայ խիստ սահմանափակ, երբ յայտնուին վերջնական արդիւնքները:

Ընտրական կանոններու խախտման մասին վէճերը հաւանաբար տակաւին երկար ժամանակ մնան անլոյծ:

Այս հանգրուանին սակայն, հակառակ շրջանաւարտ իշխանութեանց կողմէ իրենց վարչական միջոցներով ընտրական ընդունուած սովորութիւններու եւ կանոններու խախտման ակնյայտ պարագաներուն, որոնք այժմ տակաւին ենթակայ են ընթացիկ վերաքննութեանց, ամենայն դէպս, որպէս առաւելագոյն քուէ ստացող խմբաւորում՝ կը շնորհաւորենք «Քաղաքացիական պայմանագիրը»:

Մեր գլխաւոր կոչը եւ պատգամը սակայն, հաստատ կը մնայ՝ ուղղուած Հայաստանի մէջ գործող բոլոր քաղաքական, տնտեսական եւ մտաւորական շրջանակներուն, ինչպէս նաեւ ամբողջ Հայ ժողովուրդին, ամէն ջանք գործադրել, որպէսզի Հայաստանի մէջ տիրէ խաղաղութիւն, միասնականութիւն, եւ յարգանք հանդէպ մեր բոլոր սրբութիւններուն: Մանաւանդ առաւելագոյն կարեւորութեամբ ու հետեւողականութեամբ հետապնդել երկիրը իր սեփական պաշտպանութեան միջոցներով օժտելու կենսական աշխատանքը:

Տեխնոլոգիաների տակ մնացած ընտրողը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի խորհրդարանական ընտրությունների նախնական արդյունքներով, եթե ԲՀԿ-ն վերջնահաշվարկի արդյունքում չանցնի խորհրդարան,101 պատգամավորից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը կունենա՝ 64 մանդատ,«Ուժեղ Հայաստան» կուսակցությունը՝ 29 մանդատ,«Հայաստան» դաշինքը՝ 12: Իսկ եթե ԲՀԿ-ն 5 մանդատով անցնի խորհրդարան, ապա այս համամասնությունը մի փոքր կխախտվի, ՔՊ-ի մանդատները կարող են նվազել երեք -չորսով:

Իշխող կուսակցությունն, այդպիսով, նոր խորհրդարանում չի ունենալու սահմանադրական մեծամասնություն, այս մասին ստորեւ կխոսենք դեռ: Գագիկ Ծառուկյանի դեմ հարուցված վարույթը, մինչ այդ էլ նրա եւ նրա տիրապետած գույքի վերաբերյալ այլ վարույթներ տարբեր ասեկոսեների առիթ են դարձել առ այն, որ ԲՀԿ-ի հետ իշխանական բանակցություններ կան՝ խորհրդարանի ապագա քվեարկություններում իշխանությանը ԲՀԿ-ի աջակցելու վերաբերյալ, ու դրանից է կախված ԲՀԿ-ի մուտքը խորհրդարան, չնայած ԲՀԿ-ից ժխտում են մեծամասնության հետ համագործակցելը: Մի խոսքով՝ ընդամենը չորս տոկոս ստացած Ծառուկյանը դարձել է իշխանության եւ ընդդիմության խորհրդարանական պատկերի գծագրման գլխավոր գործոն:

Հայաստանի վերջին խորհրդարանական ընտրությունները արտացոլում էին Արեւմուտք-Ռուսաստան դիմակայությունը Հարավային Կովկասում՝ մասնավորապես այժմ առանցքային տարածք Հայաստանի համար: Այս առումով մեր տեղական ընտրությունները դարձել էին մրցակցող կողմերից հայ ընտրողի գլխին թափված թույլատրելի եւ անթույլատրելի տեխնոլոգիաների, հավաստի եւ անհավաստի տեղեկատվական զինատեսակների կիրառման փորձադաշտ՝ սկսած միջազգային աջակցման հայտարարությունների տարբեր ձեւաչափերից, վերջացրած ֆինանսական եւ այլ միջամտություններով: Ընտրություններին, փաստորեն, ազգովին մնացինք դրսից ու ներսից, ընդդիմությունից եւ իշխանությունից կիրառվող տեխնոլոգիաների տակ, որոնց արդյունքում միշտ թվում է, թե ընտրում ես, մինչդեռ ուրիշների պարտադրած սխեմաների մաս ես դառնում:

Ասել, թե մեր ընտրողը չէր հասկանում, թե ինչ է կատարվում՝ չի կարելի, չնայած պարզ մարդիկ կարող են չնկատել, չտարբերել: Բայց հավաքական բնազդի դրսեւորման իմաստով մեր ընտրողին շատ մեղադրել չենք կարող, քանի որ այդ տեխնոլոգիաներից շատերն աշխատեցին հենց դրանք կիրառողների դեմ՝ ապահովելով հայ ընտրողի բարձր մասնակցություն եւ ակամա հակադրվելն այդ տեխնոլոգիաներին: Միայն մեկը նշենք. երբ սկսեցին խոսել այն մասին, որ Ռուսաստանից մեծ թվով ընտրողներ են գալու՝ մասնակցելու ընտրությանն ու ռուսամետ ուժերից մեկի օգտին քվեարկելու, սա սասանեց Արցախի կորստով պայմանավորված հակառուսական տրամադրված ընտրողների անտարբերությունը, նրանք գնացին ընտրատեղամաս եւ այլընտրանք չունենալով՝ ընտրեցին իշխանությանը, այդպիսով նշան ցույց տալով, որ չեն հանդուրժելու դրսի ակնհայտ միջամտություն: Այդպես կարելի է մեկ առ մեկ թվել յուրաքանչյուր՝ մեր կողմից ֆիքսված տեխնոլոգիաների ազդեցությունն ու հակազդեցությունը, ընդ որում՝ վստահ ենք, որ դրանց վրա ամեն կողմից աշխատել են պրոֆեսիոնալների մեծ խմբեր՝ երեքհարյուր հազար ադրբջենցիների վերադարձի թեզից սկսած մինչեւ «պեռաշկի» ուտել, պրիմիտիվ հակագովազդներից մինչեւ բարդ մանիպուլյացիաներ:

⇨3

«Փաշինյանն այլեւս չի հանդուրժում այլախոհությունը»

«ՀՀ ընտրողները Բրյուսելին քվե չեն տվել, պատժել են հովանավորին, որն իրենց ճակատագրական պահին լքել է»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ



Հունիսի 7-ի ուշ երեկոյան դեռ չէին ավարտվել ՀՀ-ում խորհրդարանական ընտրությունները, առավելեւս քվեների հաշվումը, սակայն գերմանագիր ԶԼՄ-ները վերնագրեր էին դնում՝ «Փաշինյանը հաղթում է մեծամասնության քվեով»: Կեսգիշերն անց, Փաշինյանի ելույթից հետո, **Berlin Morgen**-ը նույնիսկ հավելեց, թե նա, նրա կուսակցությունը «56,7 տոկոսով պատմական հաջողություն է արձանագրում ընտրություններում»: **«Թագեսշփիգելը»,** միակը չէր, որ վերնագրում հատուկ շեշտադրել էր, թե «արեւմտամետ իշխող կուսակցությունն է նկատելի առաջատարը»՝ հիշեցնելով ռուսամետ ընդդիմության՝ երկիրը ժողովրդավարացման ուղուց շեղելու նպատակը: Ընդդիմության մասին «եռագլուխ պատերազմի կուսակցություն» բիրտ բնորոշումը փոխարինվել էր «երեք օլիգարխներով», որ անշուշտ ռուսական շահերի ուղեկցմամբ ոչ դրական վերաբերմունք էր փոխանցում:

Հայաստանն ու նրա ժողովուրդը կարծես լուսանցքում էր մնացել մեր գործընկերների վերլուծություններում, որ զարմանալի արագությամբ, հունիսի 7-ի ուշ երեկոյան, գիշերը, գիշերն անց, հունիսի 8-ի լուսադեմին թարմացնում էին իրենց հրապարակումները, առանց սպասելու ԿԸՀ տվյալների հրապարակմանը, կարծես վախենում էին օդանավից ուշանալ ու շտապում էին լքել Արարատի երկիրը՝ հանգիստ շունչ առնելով, թե «հետընտրական զարգացումներ չեն լինի», ինչպես վստահեցրել էր վարչապետ Փաշինյանը ընտրություններից անմիջապես հետո գիշերային մամուլի ասուլիսում: Ընտրարշավից առաջ էլ նույն վերնագիրը կար գերմանագիր ԶԼՄ-ներում՝ Հայաստանը՝ Ե՞Մ, թե՞ ՌԴ: Ընտրություններից հետո էլ այդ ճամփաբաժանը, կամ ՀՀ-ի այդ աշխարհաքաղաքական կողմնացույցը ցավոք միակ ընդգծված մեծ վերնագիրն է դառնում արտերկրի հետաքրքրությունների սարդոստայնում: Շատ ուրախ են ընդգծում, թե ՌԴ-ն տարածաշրջանից, Հարավային Կովկասից վերջապես դուրս է մղվում:

⇨8

CNN-ի բացահայտումը. Ադրբեջանը Իսրայելի հետախուզական եւ ռազմական գործողությունների հենակետը Իրանի սահմանին

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ



Ըստ CNN-ի, Իսրայելը Իրանի հետ պատերազմի ընթացքում գաղտնի կերպով հատուկ ռազմական ու հետախուզական ստորաբաժանումներ էր ուղարկել Ադրբեջան:

Այս փաստերը CNN-ի միջոցով շրջանառության մեջ են դրվում Լիբանանում հայտարարված 10-օրյա հրադադարի խախտման պայմաններում Իրանի եւ Իսրայելի միջեւ բռնկված նոր ռազմական գործողությունների ֆոնին, որի առիթով ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** հակամարտող կողմերին զսպվածության կոչով է դիմել:

Ադրբեջանում տեղակայված գաղտնի հենակետերը, ըստ CNN-ի, նախատեսված էին Իրանի դեմ իրականացվող գործողությունների համար:

Տեղեկացված աղբյուրների փոխանցմամբ, նշված ուժերը գործել են Ադրբեջանի հարավում գտնվող մի քանի վայրերից՝ Իրանի հյուսիսային սահմանի անմիջական հարեւանությամբ: Ամենամոտ կետը, ըստ տեղեկացված աղբյուրների, գտնվում էր Թավրիզ քաղաքից ընդամենը 90 կմ հեռավորության վրա: Հայտնի է, որ 40-օրյա պատերազմի ընթացքում Թավրիզը հայտնվել էր Իսրայելի ռմբակոծությունների թիրախում:

Իրանական «Էնթեխաբ» պարբերականի հաղորդմամբ, CNN-ի հրապարակած տեղեկատվության մեջ նշվում է, որ հատուկ նշանակության կոմանդոսային ստորաբաժանումներ եւս տեղակայված էին այդ վայրերում եւ իրականացնում էին հետախուզական ու անօդաչու թռչող սարքերի հետ կապված գործողություններ, որոնք պատերազմի ընթացքում Իսրայելին հնարավորություն էին տալիս վերահսկել Իրանի հյուսիսային շրջանները:

Ադրբեջանի տարածքում նշված գաղտնի հենակետի տեղակայումը, որի մասին առաջին անգամ տեղեկանում ենք CNN-ից, Մերձավոր Արեւելքում Իսրայելի տրամադրության տակ եղած մի քանի ռազմական դիրքերից մեկն էր, որը իսրայելական ուժերին տալիս էր աննախադեպ հասանելիություն:

CNN-ի աղբյուրների համաձայն, Ադրբեջանի տարածքում տեղակայված իսրայելական հենակետերը Իրանի դեմ իրականացված գործողությունների ժամանակ ունեցել են նույնպիսի դերակատարություն, ինչպիսին ունեցել են Իրաքի, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Սոմալիլենդի գաղտնի ռազմաբազաներն ու ռազմական օբյեկտները:

Սկզբնական շրջանում դրանք նախատեսված են եղել որպես հնարավոր փրկարարական խմբերի տեղակայման վայրեր՝ արտակարգ իրավիճակների դեպքում: Սակայն հետագայում դրանք վերածվել են ռազմական եւ հետախուզական հենակետերի:

Նշված հենակետերը պատերազմի ընթացքում իսրայելական ուժերին հնարավորություն էին տվել դիրքավորվել Իրանի հարավային, արեւմտյան եւ հյուսիսային սահմանների երկայնքով՝ իսրայելական բանակի գործողությունների շրջանակը տարածելով Իրանի տարածքի խորքում:

Ադրբեջանը՝ Իսրայելի ռազմավարական գործընկեր

Իրանական մամուլը նաեւ տեղեկացնում է, որ Ադրբեջանի տարածքում Իսրայելին հաջողվել էր ստանալ եւս մեկ հենակետ՝ օդաչուների հնարավոր կործանման դեպքերում օդային փրկարարական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաեւ Իրանին լրտեսելու նպատակով:

Իսրայելը տեւական ժամանակ Ադրբեջանին դիտարկել է որպես ռազմավարական գործընկեր Իրանի դեմ պայքարում, եւ այդ գործողությունների նախապատրաստական աշխատանքները մեկնարկել էին պատերազմի առաջին հարձակումներից շաբաթներ առաջ:

Տեղեկացված երկու աղբյուրներ CNN-ին հայտնել են, որ հունվարի կեսերին Իսրայելը նախապատրաստել էր գաղտնի գործողություն Ադրբեջանի եւ Իրանի սահմանի երկայնքով: Աղբյուրները նկարագրել են այն որպես նախապատրաստական գործողություն, որի շրջանակում տեղադրվել էին լսողական սարքեր եւ հետախուզական սարքավորումներ՝ հետագա քայլերի համար հիմք ստեղծելու նպատակով:

Իսրայելը նախատեսել էր այս գործողությունն իրականացնել հունվարի կեսերին՝ պատերազմի սկզբնական շրջանում, սակայն ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը վերջին պահին չեղարկել էր հարձակումները: Այդուհանդերձ, Իսրայելը գործել էր ինքնուրույն:

Իսրայելի ռազմաօդային ուժերը օգտագործել են ռադարների վերահսկողությունից դուրս գտնվող կործանիչներ եւ հատուկ նշանակության ուժեր՝ այդ սարքավորումները տեղադրելու գործողության շրջանակում:

Այս հետախուզական հենակետը Իսրայելին հնարավորություն էր տալիս տեղեկություններ հավաքել Իրանի ռազմական տեղաշարժերի եւ օբյեկտների մասին, ինչպես նաեւ նախազգուշացում ստանալ հրթիռների արձակման վերաբերյալ:

Երկու շաբաթ անց Իսրայելի արտաքին գործերի նախարար **Գիդեոն Սաարը** այցելել է Բաքու եւ հանդիպել Ադրբեջանի նախագահի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

2025 թվականի մայիսին Ադրբեջանը նաեւ կազմակերպել էր Իսրայելի եւ Սիրիայի միջեւ անցկացված հազվադեպ ուղիղ բանակցությունները:

Աղբյուրներից մեկի համաձայն, Ադրբեջանից իրականացված առանցքային գործողություններից մեկը մարտի 4-ին **Ռահման Մողադդամի** սպանությունն էր: Նա հանդիսանում էր Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզական ստորաբաժանման ղեկավարներից մեկը, եւ Իսրայելը նրան համարում էր 2024 թվականին Դոնալդ Թրամփի դեմ մահափորձի կազմակերպիչ:

Մեկ օր անց անօդաչու սարքերը հարվածել էին Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության մայրաքաղաքի օդանավակայանին՝ վնասելով տերմինալի շենքը եւ վիրավորելով մի քանի մարդու: Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** մեղադրել էր Իրանին, մինչդեռ Իրանը հերքել էր անօդաչուների արձակումը:

Շաբաթներ անց Իսրայելը պաշտոնապես ընդունեց, որ դա համատեղ գործողություն էր, որին մասնակցել էին «Մոսադ»-ը, Իսրայելի բանակը եւ ներքին անվտանգության ծառայությունը:

Իսրայելն ու Ադրբեջանը պահպանել են սերտ հարաբերություններ առեւտրային եւ ռազմական շահերի ոլորտներում: Ադրբեջանն ապահովում է Իսրայելի նավթի զգալի մասը: Փոխարենը Իսրայելը Ադրբեջանին վաճառում է առաջադեմ սպառազինություն, որի մի մասն օգտագործվել է 2016 եւ 2020 թվականների Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների ընթացքում՝ Հայաստանի դեմ:

⇨7

Իրանցի վերլուծաբանը՝ Հայաստանի ընտրությունների եւ արցախցիների քաղաքական իրավունքների մասին

Հայաստանի խորհրդարանական ընտրություններում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաղթանակի առթիվ ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանին** շնորհավորելով՝ Իրանի նախագահ **Մասուդ Փեզեշքիանն** ու արտաքին գործերի նախարար **Աբբաս Արաղչին** շտապեցին հայ ժողովրդին փոխանցել այն ուղերձը, որ անկախ Հայաստանում ձեւավորվելիք իշխանություններից՝ պաշտոնական Թեհրանը պատրաստ է շարունակել եւ խորացնել համագործակցությունը Երեւանի հետ:

Սակայն Հայաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ իրանական մամուլում եւ վերլուծական շրջանակներում շրջանառվող գնահատականները միանշանակ չեն:

Իրանցի փորձագետ, Հարավային Կովկասի քաղաքական գործընթացներին ուշադիր հետեւող վերլուծաբան **Ահմադ Քազեմիի** կարծիքով, Հայաստանի խորհրդարանական ընտրությունները, որոնք անցկացվեցին Լեռնային Ղարաբաղի ինքնակառավարման համակարգի փլուզումից եւ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական բանակի գործողությունների հետեւանքով ավելի քան 120 հազար հայերի հարկադիր տեղահանումից հետո, Հայաստանի ժողովրդավարության առաջին լուրջ փորձությունն էին:

Վերլուծաբանի ուշադրության կենտրոնում է եղել էթնիկ զտման ենթարկված արցախահայության՝ Հայաստանի համապետական ընտրություններին մասնակցելու իրավունքի եւ դրա սահմանափակումների հարցը: Նա հիշեցնում է, որ ոչ վաղ անցյալում արցախցիներն իրենց հայրենիքում՝ Արցախում, օգտվում էին ընտրական իրավունքից:

Քազեմիի համոզմամբ, էթնիկ զտման ենթարկված Լեռնային Ղարաբաղի հայերի գլխավոր խնդիրը ոչ այնքան Հայաստանի Հանրապետության քաղաքացիության բացակայությունն է, որքան իրավական եւ վարչական բնույթի այն խնդիրները, որոնք կապված են Հայաստանի կառավարության կողմից նրանց տրամադրված «070» ծածկագրով անձնագրերի կարգավիճակի հետ:

Հեղինակը նշում է, որ այդ անձնագրերը նախկինում ճանաչվում էին որպես Լեռնային Ղարաբաղի հայերի վավեր ճանապարհորդական փաստաթղթեր: Դրանք Հայաստանի կառավարությունը տրամադրում էր արտասահմանյան ուղեւորությունների իրականացման եւ Հայաստանում որոշ քաղաքացիական իրավունքներից օգտվելու նպատակով:

Քազեմին փաստում է, որ ներկայումս Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերը կանգնած են ընտրության առաջ. կա՛մ դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, ինչի դեպքում նրանց տրվող անձնագրերը չեն ունենա «070» կոդը, կա՛մ պահպանել այդ կոդով փաստաթուղթը՝ միաժամանակ ունենալով նաեւ փախստականի կարգավիճակը հավաստող քարտ:

Այս հանգամանքներին անդրադառնալուց հետո Քազեմին եզրակացնում է, որ ընտրելու իրավունք ունեցող ավելի քան 70 հազար չափահաս արցախցի տեղահանվածներ փաստացի զրկված են այն երկրի քաղաքական կյանքի ձեւավորմանը մասնակցելու հնարավորությունից, որը նրանք նույնպես իրենց հայրենիքն են համարում:

Իրանցի վերլուծաբանը նշում է, որ եթե նախկինում «070» կոդը որոշակիորեն խորհրդանշում էր Լեռնային Ղարաբաղի հայերի՝ Հայաստանում քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների սահմանափակված լինելը, ապա այսօր այդ նույն կոդը նրանց համար ձեռք է բերել նոր նշանակություն՝ դառնալով Լեռնային Ղարաբաղին իրենց պատկանելիության վկայությունը:

Ըստ Քազեմիի, Լեռնային Ղարաբաղի հարցի, արցախցիների վերադարձի իրավունքի եւ տեղահանված հայ փախստականների իրավունքների նկատմամբ քաղաքական ուժերի վերաբերմունքն այսօր դարձել է Հայաստանի մրցակից կուսակցությունների միջեւ տարբերակման կարեւորագույն գծերից մեկը:

Այդ համոզմունքից ելնելով՝ նա կարծում է, որ ընտրությունների արդյունքները կարող են էական ազդեցություն ունենալ Հայաստանի ապագա քաղաքական ուղեգծի եւ արցախյան հարցի նկատմամբ պաշտոնական մոտեցումների վրա:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Փաշինեանը գերազանցեց ինքզինք

Մեծ ակնկալութիւններով համայն հայութիւնը կը սպասէր Յունիս 7-ի համապետական խորհրդարանական ընտրութիւններուն, յոյս ունենալով, որ Մայր հայրենիքը, Հայոց պետութիւնը, վերջին 7-8 տարիներու վերիվայրումներէն, հողային ու տարածքային կորուստներէն, հազարաւոր երիտասարդներու զոհաբերումէն, հայրենիքի անբաժանելի կարգ մը մասերուն եւ Արցախին կորուստէն, Հայ եկեղեցին ու եկեղեցականները հալածելէն, Սրբազան Արարատը, Մեծ եղեռնը ուրանալէն, Սփիւռքը անտեսելէն, ներքին պառակտումներ, փոխադարձ ատելութիւն հրահրելէն, մեր պետութինը ատրպէյճանա-թրքական ողորմածութեան յանձնելէն ետք, վերջապէս կուենայ համաժողովրդային ընտրութիւններով ինքզինք վերագտնելու առիթ եւ կարելիութիւն, ներքին հաւասարակշռութիւնը վերահաստատելու, իշխող ուժին նկատմամբ սահմանադրական հակակշիռներ ստեղծելու, նոր խորհրդարանի միջոցով մեր երկիրին ներքին անդորրութիւնը վերահաստատելու, արտաքին դիւանագիտութեան միջոցով բոլոր երկիրներու հետ յարաբերութիւնները ի շահ մեր պետութեան ամրապնդելու եւ, ի վերջոյ, արտաքին սպառնալիքներէն խուսափելու, ազգային բանակին մարտունակութիւնը բարձրացնելու եւ զայն արդիականացնելու կարողութիւնը:

Սակայն,աւա՜ղ, գործող իշխանութիւնը, ի գլուխ ունենալով անարժանաբար վարչապետի պաշտօնը տակաւին կրող անձը, կրկին ի գործ դրաւ պետական-վարչական բոլո՛ր գործիքները՝ ոստիկանական ճնշումներ, այսպէս կոչուած դատական իշխանութիւններու միջոցով մրցակիցներու ձերբակալութիւններ, Կեդրոնական ընտրական յանձնաժողովի եւ Սահմանադրական դատարանի ստորաքարշ համագործակցութեամբ ընտրական օրէնքի բացայայտ խախտումներ, քուէներու գողութիւններ եւ, ամենասարսափելին, մրցակից կուսակցութիւններու գրասենեակներու եւ ղեկավարներու դէմ սպառնալից գործողութիւններ եւ ձերբակալութիւններ յաջորդեցին իրարու, տակաւին մանրամասն չխօսելով ընտրակեղծիքներու եւ վախի ընդհանուր մթնոլորտ ստեղծելու նիքոլական քաղաքականութեան մասին:

Ներկայ պահուն, քուէարկութեան աւարտէն 48 ժամ անց, տակաւին յայտնի չեն վերջնական արդիւնքները: Որոշ ընտրատեղամասերու մէջ, բացայայտ ընտրակեղծումներու առկայութեամբ կը կատարուին քուէներու վերահաշուարկումներ, որոնց արդիւնքները տակաւին պարզ չեն: Միւս կողմէ, պաշտօնեաները կը սպասեն «Վերին Մարմինի» հրահանգին՝ իրենց պաշտօնը շարունակելու կամ պաշտօնազրկուելու երկմտանքի, տատամսումի դողդողանքի մէջ:

Միայն մէկ բան յայտնի է առայժմ կամ ցնոր տնօրինութիւն. որ նախնական տուեալներով Նիքոլ Փաշինեանը եւ իր գլխաւորած կուսակցութիւնը չեն յաղթահարած 50+ սահմանը, հետեւաբար չեն կրնար կառավարութիւն կազմելու եւ վարչապետ նշանակելու իրենց ծրագիրը պարտադրել: Առնուազն 4 կուսակցութիւն՝ Նիքոլի «Քաղաքացիական պայմանագիր», Ռոպերթ Քոչարեանի գլխաւորած «Հայաստան դաշինք», Սամուէլ Կարապետեանի «Ուժեղ Հայաստան» դաշինքը եւ, հաւանաբար, Գագիկ Ծառուկեանի «Բարգաւաճ Հայաստան» կազմակերպութիւնները յաղթահարած են խորհրդարան անցնելու սահմանագիծը: Վերջին՝ ընդդիմադիր 3 ուժերը տակաւին երկմտանքի մէջ են՝ հրաժարի՞լ իրենց պատգամաւոր ունենալու իրաւունք mandate-ներէն, թէ՞ մտնել խորհրդարան՝ հո՛ն շարունակելու իրենց պայքարը:

Սպասելով վերջնական որոշումներուն, նաեւ՝ քուէները հաշուող ու տակաւին տատամսող մարմինին եզրակացութեան, մեր կողմէ կրնանք կրկին ափսոսանք յայտնել, որ համերաշխութեան, համահայկականութեան, ազգաշահութեան մեր ձգտումները արդիւնաւորուած չեն, դժբախտաբար:

Հետեւաբար, մենք, Սփիւռքի մէջ տակաւին մեր հայու ինքնութիւնը չկորսնցուցած հայերս, պիտի շարունակենք քաղաքական պայքարը ընդդեմ Նիքոլ Փաշինեանի ազգակործան իշխանութեան՝ վասն Մայր հայրենիքի եւ Հայոց պետութեան հզօրացումին:

Իր ապազգայնութեամբ, թրքասիրութեամբ, հակաժողովրդական ու հակամարդկային գործունէութեամբ եւ ստախօսութեամբ Նիքոլ Փաշինեանը այս ընտրութիւններուն գերազանցեց ինքզինք՝ նոր մրցանիշներ հաստատելով:

Ռ. Ա.

Տեխնոլոգիաների տակ մնացած ընտրողը

⇨1 Ընդ որում՝ չի կարելի բացառել տեխնիկապես բարդ նախագծված ընտրական մանիպուլյացիաները երկու կողմից էլ, միայն ինչ արժե այն, որ ԲՀԿ-ի պահանջով մի քանի տեղամասերում իրականացվող վերհաշվարկի արդյունքում ավելանում են ոչ միայն ԲՀԿ-ի, այլեւ ՔՊ-ի ձայները, իսկ այլ ուժերինը պակասում, սա կարելի էր նախօրոք գծագրել: Վարչական ռեսուրսի կիրառման մասին էլ որ ասում են՝ես անկախ Հայաստանի բոլոր ընտրությունների ականատեսն եմ եղել ու վստահ կարող եմ պնդել, որ չի եղել գեթ մեկ իշխանություն, որ վարչական ռեսուրս չի կիրառել: Իշխանություն լինելով՝ ընտրության մասնակցելն արդեն իսկ սեփական հաշվին գրանցած վարչական ռեսուրս է:

Ամեն դեպքում՝ իշխանությունը չունի այն 70 մանդատը, որ նրան հարկավոր էր նոր Սահմանադրության ընդունման, սահամազատման թնջուկները լուծելու, խաղաղության, ԹՐԻՓՓ-ի համաձայնագրերի խորհրդարանական քվեարկության, գլխավոր դատախազի եւ այլ մի շարք այլ առանցքային պաշտոնների նշանակման համար: Վերջինը խնդիր է դառնալու նաեւ այն առումով, որ այդ պաշտոններում նշանակվող անձինք պետք է նաեւ ընդդիմության քիմքով լինեն, այդ առումով՝ ընդդիմությունը /կամ նրա հովանավորները/ կարող է նաեւ քվոտա պահանջել: Պատկերացրեք, եթե գլխավոր դատախազը կամ ԲԴԽ-ի, հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարները ընդդիմամետ լինեն՝ ամեն օր օլիգարխներին պատժելու որոտ ու կայծակ թափող Նիկոլ Փաշինյանն ի՞նչ է անելու:

Ընտրությունների շեմը չհաղթահարած, բայց բարձր տոկոս ստացած կուսակցությունները, ինչպես օրինակ Արման Թաքոյանի, Գուրգեն Սիմոնյանի կուսակցությունները, քվեների ոչ անցողիկ, բայց ներշնչող թիվ ստանալու պատճառով մեր հարկերի հաշվին հինգ տարի շատ մեծ գումարներ կստանան բյուջեից:

ԿԸՀ նախնական արդյունքներն ավելի ճշգրիտ պատկերով այսպիսին էին՝ «Քաղաքացիական պայմանագիր»՝ 49,825 տոկոս, «Ուժեղ Հայաստան»՝ 23,281 տոկոս, «Հայաստան» դաշինք՝ 9,934 տոկոս, «Բարգավաճ Հայաստան»՝ 3,996 տոկոս: Ընտրության մասնակիցների թիվը՝ 1 436 452 էր:

ԲՀԿ-ն խոսել է իր քվեները նվազեցնելու մասին եւ վերջնահաշվարկ է պահանջել, եւ ըստ նրա պատասխանատուների՝ արդեն իսկ կարող է հայտնվել խորհրդարանում: Բայց վերջնահաշվարկի արդյունքում կարծես թե ավելանում են նաեւ ՔՊ-ի ձայները, ճիշտ է՝ ոչ էապես:

Մի քանի փաստ առայժմ՝ մտորումների համար.

-Կես միլիոնից շատ ավելի ընտրող իր ձայնը տվել է ռուսամետ ուժերի/ազգային փաթեթավորմամբ/.

-ՔՊ-ն, որին դժվար է միանշանակ արեւմտյան կամ եվրոպական արժեքների ուժ համարել, ստացել է յոթհարյուր հազարից շատ ավելի քվե, բայց սահմանադրական մեծամասնություն չունի, ասել է թե՝ այդպիսի թիվ պահանջող քվեարկություններ չի կարող ապահովել: Իսկ միգուցե այդպես հարմա՞ր է, որովհետեւ օրինակ հանրաքվեների արդյունքները հենց այդպիսի մեծամասնությամբ են հաստատում պահանջում: Հիշենք՝ ովքեր են մեզնից հանրաքվե պահանջում. Պուտինը՝ ԵԱՏՄ-ից ու ՀԱՊԿ-ից դուրս գալու հանրաքվե է պահանջում, Ալիեւը՝ մեր Սահմանադրությունից Անկախության հռչակագրին հղումը հանելու, իսկ այդպիսի հարցերի բարձրացումը, դրանց հաստատումը միայն սահմանադրական մեծամասնությամբ է հնարավոր: Ինչ համար է, չէ՞, այդպիսի մեծամասնություն չունենալու պատրվակով այդ պարտադրանքներից ազատվելը գոնե ժամանակավորապես:

-Կարո՞ղ եք պնդել, որ խորհրդարանում ընդդիմափոխություն չի կատարվում ընտրությունների այս արդյունքներով, ու դոմինանտը չի դառնում մեկ ուրիշ ուժ, երկրորդական դերակատարման մղելով «Հայաստան» դաշինքին, այն, ինչ հարմար է նաեւ մեծամասնությանը, չնայած բովանդակային առումով բան չի փոխվում տասնյակ տարիներ գործող, դերաբաժանված համակարգի ներքին կոնտուրների սոսկ փոփոխության, իրականում՝ պահպանման առումով, եւ այս դեպքում թմբկահարված եռագլուխը հենց համակարգն է՝ մի գլուխն էլ իշխանությունը: Համակարգ, որն իր ներսում բաժանում է լծակները, փոխելով տոկոսային ուրվագծերը, բայց պահպանելով ընդհանուր պատկերը, ու դրա համար կուզեք տասնութ ուժով մասնակցեք ընտրություններին, թե հարյուրտասնութով՝անօգուտ է: Այս նոր ընդդիմությամբ եւս հինգ տարի կարելի կլինի ողջ պաթոսով իրար սեւացնելով՝ իշխանություն պահել, ընդդիմություն խաղալ, արեւմուտքն ու ռուսները վաթսուն-քառասուն հարաբերակցությամբ ներկայացված կլինեն մեր խորհրդարանում՝ որոշումների վրա ազդեցության ա'յդ բացվածքով: Մեր քաղաքական համակարգի նորացումն ու աշխարհի ներկա պահանջներին հմապատասխանեցումը կհետաձգվի եւս հինգ տարով՝ խորհրդարանում միմյանց վրա գոռգոռացող իշխանության եւ ընդդիմության՝ մեր նյարդերը սղոցելու հաշվին:

Ընդդիմության՝ մանդատները վայր դնելու եւ փողոցային պայքար ծավալելու խոսակցությունը, որն այս պահին առկա է, եւս լուրջ չէ՝ նախ փողոցային պայքարը վաղուց սպառել է իրեն, մեր ժողովուրդն արդեն չի գնա փողոց երկար ժամանակ: Բացի այդ՝ ես նայում եմ ընդդիմադիր նոր ուժի ցուցակը՝ այնտեղ խորհրդարանական ամբիոն փափագող պոպուլիստները շատ են, նրանք չեն թողնի մանդատները չվերցնել: Բացի այդ՝ որոշումներ կայացնողներն այլ հաշվարկներ ունեն, ռուսներին Հայաստանը կենսականորեն հարկավոր է, եւ անկախ ռուս պաշտոնյաների ներկա ամենօրյա կոշտ հռետորաբանությունից, բոլոր առումներով անընդունելի, մեր երկրի ներքին գործերին միջամտելու խոսույթից՝ Ռուսաստանը հազիվ թե կիրառի իր գազային, ելակային, ձկնային, ՀԱՊԿ-ից, եսիմ ԵԱՏՄ-ից հեռացնելու, մյուս սպառնալիքները, հո ինքնասպան չի՞: Թե բա՝ մրցակցային եւ բաց ընտրություններ, ԱՊՀ-ական դիտորդական գաստրոլներ, Պուտինը չի շնորհավորել-Արեւմուտքը, Թրամփը, Ռուբիոն, ֆոն դեր Լայենը, ֆլանֆստանը շնորհավորել են: Պուտինը կշնորհավորի, անպայման, դա իր երկրի շահերի տիրույթում է: Ու որ ասում են, թե խորհրդարան անցած ընդդիմությունը քննարկում է՝ վերցնել, թե չվերցնել մանդատները՝ դա հեքիաթի ժանրից է, նոր ձեւավորված ուժից քսանինն-երեսուն պատգամավոր լինելու են խորհրդարանում, հիմա երեւի ուրախությունից տրճիկ են տալիս:

Իսկ եթե ու հանկարծ ընդդիմությունը չվերցնի մանդատները, որը մենք հավանական չենք համարում՝ նշանակում է այնտեղ լավ չեն տիրապետում ոչ Ընտրական օրենսգրքին, ոչ Սահմանադրությանը, չվերցնելուց հետո սուրբ տեղը դատարկ չի մնալու, իսկ իշխող կուսակցությունը հարյուր տոկոսով դառնալու է դրության տերը:

Ի դեպ՝ վերջին հարցազրույցում արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, պատասխանելով սահմանադրական մեծամասնություն չունենալու պատճառով նոր Սահմանադրության չընդունման հնարավորությանը, ակնարկում էր, որ Սահմանադրության ընդունումը մարդկանց առաջնային իրավունքներից է, դա կարելի է անել 300 հազար ստորագրությամբ հարցը բարձրացնելով, ասել է թե՝ մեր օրենսդրությունը ունի հնարավորություն այդ հարցն այլ կերպ ընթերցելու:

Բայց ընդհանուր առմամբ՝ նոր խորհրդարանի ներկա պատկերը ցույց է տալիս, որ ոչ մեր ընդդիմությունն է ուժեղ եւ ազդեցիկ, ոչ իշխանության ձայնն է շատ բարձր, ու սա երկրով մտահոգների համար, առաջիկա բազմաթիվ մարտահրավերներին դիմակայելու առումով, անհանգստության պատճառ է: Աստված գիտե, թե ինչ զարգացումներ կհետեւեն, արդյոք ընդդիմությունն այնքան հասուն կգտնվի՞՝ Հայաստանը հետընտրական զարգացումներով ավելի խորը չներքաշելու աշխարհաքաղաքական դիմակայության մեջ, իսկ իշխանությունն էլ իր անզիջում կոշտությամբ ներքին լարվածություն չի՞ հրահրի:

Իրինա Չուցովա. Վրաստանի հայկական ժառանգության ուսումնասիրողը

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

***ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ** - Արվեստագիտության դոկտոր, ազգությամբ օսեթուհի **Իրինա Պետրովնա Չուցովան** (ծնվ. 1941, Թբիլիսի) կրթությամբ պատմաբան եւ բանասեր է: 1966-1970 թթ. աշխատել է ռուսալեզու «Վեչերնի Տբիլիսի» («Երեկոյան Թբիլիսի») թերթում: Երկար տարիներ եղել է «ԽՍՀՄ դեկորատիվ արվեստ» հանդեսի Վրաստանի սեփական թղթակիցը: 1970-2009 թթ. աշխատել է Շ. Ամիրանաշվիլու անվան Վրաստանի պետական արվեստի թանգարանում, որտեղ հիմնել եւ ղեկավարել է ձեռագրա-հուշային բաժինը՝ զգալիորեն հարստացնելով այն արվեստագետների եւ գիտնականների անձնական արխիվների նյութերով: Եղել է Վրաստանի նկարիչների միության անդամ: Տպագրվում է 1966 թվականից՝ Վրաստանի, Հայաստանի, Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Սերբիայի մամուլում: Ռուսերեն եւ վրացերեն մենագրությունների եւ հարյուրավոր հոդվածների հեղինակ է՝ նվիրված վրաց կերպարվեստի պատմությանը, ինչպես նաեւ Վրաստանի մշակութային եւ գեղարվեստական կապերին այլ երկրների հետ: Մասնակցել է միջազգային գիտաժողովների եւ համատեղ նախագծերի: 2010 թվականից բնակվում է Փարիզում՝ շարունակելով հեղինակել գրքեր եւ հոդվածներ:*

-Հարգելի՛ Իրինա Պետրովնա, երկար տարիներ կարդում եմ ձեր հոդվածները հայ նկարիչների մասին եւ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մասնագիտական գնահատականների եւ անցյալի վարպետների հետ կապված բազմաթիվ բացահայտումների համար: Դուք՝ օսեթուհի Վրաստանից, ամուսնացած հայի հետ, գրում եք ռուսերեն եւ այժմ ապրում եք Ֆրանսիայում: Կարծում եմ՝ բազմամշակութայնությունը հարստացնում է մարդուն եւ մեծապես ձեւավորում նրա կերպարը: Ինչպե՞ս է այն ազդել ձե՛ր վրա:

-Թբիլիսում՝ պատմականորեն բազմազգ եւ բազմադավան քաղաքում, որը գտնվում է եվրոպական, ռուսական եւ պարսկական մշակույթների խաչմերուկում եւ ապացուցել է այս յուրահատուկ մշակութային «հյուսվածքի» լավագույն ու ամենավառ տարրերը յուրացնելու իր ունակությունը, անհնար է ապրել եւ աշխատել այս երեւույթից՝ մշակութային եւ լեզվական բազմազանությունից դուրս: Օրինակ, սկեսրայրս՝ Վարոս Ենգոյանը, ազատորեն տիրապետում էր հայերենին, վրացերենին, ռուսերենին, պարսկերենին եւ թուրքերենին:

Ճանաչելով ուրիշներին՝ մեր համերկրացիներին, նրանց մշակույթը, սովորույթներն ու բարքերը, մարդ, իհարկե, ընդլայնում է իր մտահորիզոնը, հարստացնում աշխարհընկալումը եւ բազմապատկում ստեղծագործական հնարավորությունները: Իմ անձնական եւ մասնագիտական զարգացումը որակապես այլ կլիներ, եթե ես ապրեի այլ մշակութային միջավայրում: Այս իմաստով Վրաստանը եւ հատկապես Թբիլիսին բավական յուրահատուկ երեւույթ է. այստեղ ժողովուրդները միշտ ապրել են կողք կողքի՝ ոչ թե զուգահեռ աշխարհներում, այլ հենց միասին, ոչ թե «ազգերի խառնարան» (ամերիկյան տիպի), այլ պահպանելով յուրաքանչյուրի ինքնությունը, միաժամանակ ստեղծելով խառն ընտանիքներ եւ «օտարին» նայելով ոչ թե կասկածանքով, այլ բարեհամբույր հայացքով:

Իհարկե, եղել են նաեւ ծանր ժամանակներ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո եւ գերազգայնականության ծավալման շրջանում: Սակայն, կարծում եմ, որ Վրաստանին բնորոշ «ինտերնացիոնալիզմի» ոգին հաղթել է քաղաքական կարճատես ազգայնական մոլուցքին, որը, ինչպես ցույց է տալիս պատմությունը, կարող է միայն խոր անդունդ տանել:

Բոլոր նրանք, ում հետ ինձ բախտ է վիճակվել շփվել, արդյունք են այս մշակութային եւ էթնիկ բազմադիմության, ինչպես, օրինակ, Սերգեյ Փարաջանովը՝ ազգությամբ հայ, բնիկ թիֆլիսեցի, ռուսախոս, որը փառաբանել է հուցուլներին, Սայաթ-Նովային եւ վրացի մեծ նկարիչ Փիրոսմանիին, ինչպես նաեւ Լերմոնտովի Աշուղ Ղարիբին՝ կովկասյան եւ միջինասիական ավանդազրույցների հերոսին:

-Վրաստանում ապրել են բազմաթիվ նշանավոր հայ նկարիչներ՝ Հակոբ Հովնաթանյանից եւ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանից մինչեւ Ալբերտ Դիլբարյան եւ Գայանե Խաչատրյան: Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է նրանց միաժամանակ համարել թե՛ հայ, թե՛ վրացի նկարիչներ:

-Թբիլիսիի ծնունդ այդ նշանավոր հայերը ներծծել են տարբեր հոսանքներ, գաղափարներ, անգամ աշխարհներ՝ այն անհավատալիորեն խթանող մշակութային միջավայրում, որը ձեւավորվել էր Վրաստանում 1970-1980-ականներին: Ինչպես գրել է նշանավոր փիրոսմանագետ **Էրաստ Կուզնեցովը**, «այս քաղաքում, որտեղ ստեղծագործաբար ինքնարտահայտվելու պահանջը գրեթե հավասարվել էր ուտելու, քնելու, ծարավը հագեցնելու պահանջին, որտեղ յուրաքանչյուր երրորդը նկարիչ է, բանաստեղծ կամ երաժիշտ... սովորել էին գեղարվեստական տաղանդը համարել միանգամայն բնական, առօրյա երեւույթ, իսկ արվեստը՝ առօրյա կյանքի բնական բաղադրիչ»: Ավելի լավ չես ասի:

-Ի դեպ, Նիկո Փիրոսմանիի նկարների վրա մեկ-երկու հայկական գրությունների պատճառով տպավորություն է ստեղծվել, թե նա հայ է եղել, սակայն հայտնի է, որ այդպես չէ: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ է բացատրվում նրա գործերում հայկական գրությունների առկայությունը:

-Կախեթցի Նիկո Ասլանովիչ Փիրոսմանիշվիլին բազմազգ Վրաստանի իսկական ծնունդ էր, շփվում էր երկրի բոլոր ժողովուրդների ներկայացուցիչների հետ: Իրոք, նրա կտավների վրա կարելի է տեսնել հայկական գրություններ: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մանկության տարիներին, որբ մնալով, նա ապրել է Շուլավեր գյուղում՝ հայ ազնվական Քալանթարովների կալվածքում, որոնք նրա հոր վերջին գործատուներն էին: Քալանթարովների ընտանիքում՝ նախ գյուղում, ապա Թիֆլիսում, Փիրոսմանին անցկացրել է ընդհանուր առմամբ տասնհինգ տարի՝ աշխատելով որպես խոհարարի օգնական եւ օգնելով տնային գործերում: Այստեղ է, որ նա սովորել է կարդալ, գրել եւ նկարել: Կարծում եմ՝ այստեղ էլ նա տիրապետել է վրացական, ռուսական եւ հավանաբար նաեւ՝ հայկական գրերին:

-Դուք ճանաչել եւ մտերիմ եք եղել տարբեր երկրների բազմաթիվ հայտնի արվեստագետների, բանաստեղծների, գրողների, գիտնականների, ռեժիսորների հետ, այդ թվում՝ Մինաս Ավետիսյանի եւ Սերգեյ Փարաջանովի: Կարո՞ղ եք նրանց մասին այնպիսի հիշողություններ պատմել, որոնք մինչ այժմ չեք գրել:

-Մինասի եւ Սերգեյի մասին այնքան բան է ասվել, գրեթե ամեն ինչ... Միայն կավելացնեմ, որ Մինասն այն ստեղծագործողներից է, որն ընդմիշտ մնացել է իմ հոգում: Ազնիվ, անշահախնդիր, փիլիսոփա: Նրան կարելի էր անվերապահորեն վստահել: Մինչ օրս նրա կորուստը ընկալում եմ որպես անձնական մեծ վիշտ:

Ինչ վերաբերում է Սերյոժային՝ Սերժիկին, ինչպես նրան կոչում էին Թբիլիսիում, նա դեռ կենդանության օրոք դարձել էր լեգենդ՝ ընտրյալ: Ես նրա հետ ընկերություն եմ արել ավելի քան քսան տարի: Չեմ հիշում՝ ով ինձ՝ «Վեչերնի Տբիլիսի» թերթի քսանվեցամյա թղթակցիս, բերեց նրա տուն՝ Կոտե Մեսխի փողոցում: Հետո նա ինձ հրավիրեց «Սայաթ-Նովա» ֆիլմի նկարահանումներին՝ առաջարկելով նկարահանվել: Այսպես ես հայտնվեցի մի փոքր դրվագում եւ նրանից ոչ մի նկատողություն չստացա, ինչով շատ հպարտ էի, քանի որ Սերգեյը դերասանների նկատմամբ պահանջկոտ, նույնիսկ խիստ էր: Այնուհետեւ ես թերթում հոդված գրեցի նկարահանումների մասին: Օժտված ազատ հոգով՝ նա առատորեն բաշխում էր այդ ազատությունը շրջապատին: Միեւնույն ժամանակ բարի էր, ուշադիր, զգայուն մարդկանց նկատմամբ եւ չափազանց խորաթափանց: Նուռը նրա սիրելի կինոբանաստեղծական խորհրդանիշն էր: Այսօր էլ իմ տանը միշտ նռներ կան՝ Փարաջանովին հիշեցնող որպես խորհրդանիշներ: Նա եզակի երեւույթ է համաշխարհային մշակույթում:

-Դուք նաեւ «Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի խորհրդանիշներն ու պատկերները» (2012) գրքի հեղինակն եք: Ոմանք կարծում են, որ խորհրդանիշներն ընդհանրապես չպետք է մեկնաբանել, քանի որ մեկնաբանությունն իբր «սպանում է» դրանք: Համաձա՞յն եք:

-Ֆրանսիական «Խորհրդանիշների բառարանի» նախաբանում նրա կազմող **Ժան Շեւալիեն** գրել է. «Բոլոր գիտությունները՝ բնական եւ հումանիտար, արվեստը՝ իր բոլոր ուղղություններով, այն ամենը, ինչ կազմում է մարդու մշակույթը, իր ճանապարհին հանդիպում է խորհրդանիշների: Բոլորը պետք է միավորեն իրենց ջանքերը՝ բացահայտելու խորհրդանիշների գաղտնիքը եւ ազատելու դրանցում կենտրոնացված էներգիան: Քիչ է ասել, թե մենք ապրում ենք խորհրդանիշների աշխարհում. խորհրդանիշների աշխարհն ապրում է մեր մեջ»: Ոմանց համար խորհրդանիշներն անհասկանալի եւ անհասանելի են, մյուսների համար հյուսված են կյանքի եւ դրա ընկալման մեջ: Խորհրդանիշի «ապակոդավորումը», որը դարերով կուտակված գիտելիքների, հավատալիքների եւ սնահավատությունների խտացումն է, չի զրկում այն իր խորհրդանշական ուժից, այլ օգնում է հասնել երեւույթների էությանը՝ առավել հակիրճ եւ հավաստի ձեւով:

-Դուք նաեւ «Հակոբ Հովնաթանյան. Դիմանկարներ. հիշողություններ նկարչի մասին» (2022) գրքի հեղինակն եք: Հիշում եմ մի պատմություն, թե ինչպես Թբիլիսիի պատկերասրահում, տեսնելով Հովնաթանյանի կերտած մի դիմանկարը «Անհայտ վրացի նկարիչ» մակագրությամբ, Փարաջանովը պատկերասրահի աշխատողին ասել է. «Այս անհայտ վրացի նկարիչը նշանավոր հայ նկարիչ է»: Հայտնի է, որ Հովնաթանյանը չի ստորագրել իր նկարները: Դուք հայտնաբերել եք նրա պարսկական շրջանի մի քանի գործեր: Ի՞նչ եք կարծում՝ շա՞տ են դեռ նման աշխատանքները, եւ շարունակո՞ւմ են դրանք Թբիլիսիում ներկայացվել որպես «անհայտ վրացի նկարիչ»:

-Իրոք, բազմամյա հետազոտություններիս արդյունքում ինձ հաջողվել է գտնել Հակոբ Հովնաթանյանի մի քանի նոր գործ, որոնք ստեղծվել են Պարսկաստանում նրա երկարատեւ բնակության ընթացքում: Համոզված եմ, որ Իրանում՝ թանգարաններում, ֆոնդերում, հայկական եկեղեցիներում եւ մասնավոր հավաքածուներում, պահպանվում են գործեր Հովնաթանյանից: Կարծում եմ՝ դրանք գրանցված են որպես «անհայտ նկարիչ» կամ «անհայտ պարսիկ նկարիչ», քանի որ ներկայումս հայտնի նրա գործերից միայն մեկն ունի հեղինակի ստորագրություն՝ վրացի բանաստեղծ, զինվորական եւ հասարակական գործիչ Ալեքսանդր Ճավճավաձեի դիմանկարը: Թբիլիսիի ազգային թանգարանի ֆոնդերում եւս կան «անհայտ նկարչի» գործեր, որոնք ես իմ 2022 թվականի գրքում վերագրում եմ Հակոբ Հովնաթանյանին:

-Ունե՞ք նոր նախագծեր՝ կապված հայ նկարիչների կամ բանաստեղծների հետ:

-Հակոբ Հովնաթանյանի կյանքն ու ստեղծագործությունը շարունակում են ինձ հետաքրքրել. սա լայն աշխատանքային դաշտ է: Դեռ շատ բան կա անելիք. սա արդեն առաջադրանք է երիտասարդ սերնդի պատմաբաններին եւ արվեստաբաններին: 2022 թվականին գրքի հրատարակումից հետո ես գտել եմ նկարչի եւս մի քանի գեղանկարչական եւ գծանկարչական աշխատանքներ: Այսպիսով, հերթի է գրքի նոր՝ լրացված հրատարակությունը, եւ, իհարկե, կցանկանայի, որ այն թարգմանվի հայերեն եւ անգլերեն:

-Խնդրում եմ նաեւ պատմե՛ք ձեր ամուսնու մասին: Արվեստի հանդեպ սերը ձեր մեջ ընդհանո՞ւր էր:

⇨5

Խաչքարված երկրի սրբալույս նշխարները

Վերջերս լույս է տեսել ճանաչված բանաստեղծ, թարգմանիչ, մշակույթի գործիչ, Հայաստանում Սերբիայի Հանրապետության պատվավոր հյուպատոս Բաբկեն Սիմոնյանի «Խաչքարված երկիր»՝ թվով 16-րդ գիրքը, որի անդրանիկ շնորհանդեսը տեղի ունեցավ Կարեն Դեմիրճյանի անվան թանգարանում: Գրքի շնորհանդեսից հետո զրուցել ենք հեղինակի հետ:



-Պարոն Սիմոնյան, ինչո՞ւ հենց «Խաչքարված երկիր»:

-Եթե ուշադրությամբ զննեք մեր հիասքանչ երկիրը, կտեսնենք, որ այն ամբողջությամբ հոգեւոր գանձարան է՝ նախաքրիստոնեական ու քրիստոնեական մշակույթի հուշարձաններ, տաճարներ, ժանեկահյուս խաչքարեր, վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ, ամբողջությամբ մեր հոգեւոր ժառանգությունն է խտացած Հայոց լեռնաշխարհում: Հայաստանն արարչապարգեւ երկիր է, այստեղ ամեն բան սրբացած է, ինչպես ամեն մի խաչքար: Այդ առումով էլ գիրքը վերնագրել եմ «Խաչքարված երկիր»: Գրքում նաեւ նույն վերնագրով բանաստեղծություն ունեմ, որով անվանել եմ նաեւ գիրքս:

-Թերթելով ձեր գիրքը, հասկացա, որ ամեն տողից հայրենասիրություն է հորդում...

-Էլ ի՞նչ պոեզիա առանց հայրենասիրության: Հայրենասիրությունն է այն հիմնական կռվանը, որը ազգ ու հայրենիք է պահում: Հիշում եք՝ ամեն անգամ, երբ վտանգված էր մեր հայրենիքը թշնամու հարձակումներից, արծվասիրտ տղաները հաղթական երգերով էին գնում մարտի՝ հույս ու հավատ ներշնչելով եւ քաջալերելով մարդկանց: Ցավով եմ նշում, որ աշխարհում այսօր իշխում է անհայրենիք ու անարմատ պոեզիան: Դասական տաղաչափությամբ երգող բանաստեղծը ստեղծելով հավերժի հուշարձաններ՝ մեծարում է իր հայրենիքի սրբավայրերը, հայրենաշեն մարդկանց, անցյալի փառավոր էջերը: Ես եղել եմ տարբեր երկրներում, շատ եմ շրջագայել նաեւ Հայաստանում, եւ ինձ համար այս մի բուռ, հրաշքով պահպանված հողի ամեն մի պտղունցը սրբավայր է: Հայաստանը բանաստեղծական գունեղ մի ներկապնակ է՝ իր անբացարտելի ու անվերծանելի երանգներով: Աշխարհի որ անկյունում էլ եղել եմ, սրտի թրթիռով եմ սպասել Հայաստան վերադառնալուս, որովհետեւ անհնար է հայ լինել ու ապրել առանց բիբլիական Արարատի ներկայության:

-Ո՞րն է գրքի հիմնական ուղերձը:

-Այս գրքով ցանկացել եմ ավելի ամուր եւ առարկայական դարձնել մեր պատմական հիշողությունը, որովհետեւ ոչ մի ժողովուրդ չի կարող գոյատեւել առանց պատմական հիշողության: Իմ նպատակն է եղել ընթերցողի մեջ արթուն պահել հայրենասիրության բաբախը, որը հազարամյակներով ուղեկցել է մեր ժողովրդին: Իմ ուղերձն է բոլոր ընթերցողներին՝ ուշադիր կարդալ այս գիրքը: Նրանք կտեսնեն, որ այն գրված է ոչ միայն այսօրվա, այլեւ բոլոր ժամանակների համար: Կարծում եմ՝ այս գրքով ես իմ բանաստեղծական հորդորը կթողնեմ գալիք սերունդներին՝ աչքի լույսի պես պահպանելու հայրենի հողն ու մեր հոգեւոր արժեքները, անմեռ կարոտը մեր կորուսյալ երկրի ու 1915-ին նրա նահատակված ժողովրդի հանդեպ:

-Քանի՞ ստեղծագործություն է զետեղված «Խաչքարված երկիր» գրքում:

-Այս գիրքը տպագրված եւ անտիպ բանաստեղծությունների ընտրանի է, որը ներառում է շուրջ 160 ստեղծագործություն: Մի մասը ծաղկաքաղ է արված բանաստեղծական իմ նախորդ ժողովածուներից, մնացած շուրջ 50-ը՝ առաջին անգամ են լույս տեսնում գրքում: Որոշեցի «Խաչքարված երկիր» գրքով ներկայացնել իմ բանաստեղծական ամբողջական ներկապնակը, որպեսզի ընթերցողին հասկանալի դառնա ստեղծագործական շուրջ 50-ամյա ճանապարհս:

-Ի՞նչ սկզբունքով եք ընտրել եւ դասակարգել բանաստեղծությունները:

-Գրքի վրա երկար եմ աշխատել, որպեսզի կարողանամ ճիշտ տեղաբաշխել բանաստեղծությունները եւ ընտրել դրանց հերթականությունը: Փորձել եմ այնպես կառուցել գիրքը, որ նոր բանաստեղծությունները թեմատիկ առումով շաղկապվեն ու ներդաշնակվեն նախորդ գրքերից ընտրված ստեղծագործություններին: Բանաստեղծությունները տեղաբաշխել եմ ոչ թե ըստ ժամանակագրության, այլ՝ թեմատիկայի: Ցանկացել եմ, որ նոր բանաստեղծությունները համահունչ լինեն նախորդ գրքերում տպագրված ստեղծագործություններին եւ միասին կազմեն ամբողջական պատկեր:

-Եթե «Խաչքարված երկիր» գիրքը մեկ քառատողով ներկայացնեիք, ո՞րը կլիներ դա:

Թախծում է նորից հոգիս թափառող,
Ես քո կարոտն եմ առնում, Հայաստա՛ն,
Իմ արեւաբույր ու չքնաղ ոստա՛ն,
Պաշտելի ու սուրբ հայրենի իմ հո՛ղ:

-Ավելի քան հինգ տասմանյակ զբաղվել եք սերբական գրականության թարգմանությամբ: Եթե այս գիրքը թարգմանվեր սերբերեն, ի՞նչ կցանկանայիք, որ սերբ ընթերցողը առաջին հերթին կարդար Հայաստանի մասին:

-Սերբիայում այս տարվա աշնանը սերբերեն թարգմանաբար լույս կտեսնի բանաստեղծություններիս ժողովածուն, որում կլինեն ստեղծագործություններ նաեւ «Խաչքարված երկիր» գրքից: Սերբ ընթերցողը, անշուշտ, տեղյակ Հայաստանի պատմության անցյալին ու ներկային, սակայն բանաստեղծական խոսքը նրան ավելի հասանելի ու հասկանալի կդարձնի մեր երկրի ու նրա մշակույթի մասին: Գրքում ներկայացված կլինեն ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Սերբիան, ե՛ւ իմ խոհերն ու մտորումները մարդկային ճակատագրերի ու փոխհարաբերությունների մասին:

-Անդրանիկ շնորհանդեսի համար ինչո՞ւ ընտրեցիք հենց Կարեն Դեմիրճյանի թանգարանը:

-Ասեմ, որ այս գրքում կա Կարեն Դեմիրճյանին նվիրված բանաստեղծություն՝ «Շինարարի լույսը»: Եվ որպես հարգանքի տուրք մատուցեմ ազնվագույն հայի հիշատակին, որոշեցի առաջին շնորհանդեսը իրականացնել նրա անունը կրող թանգարանում: Հետաքրքրական պատմություններ եմ լսել Կարեն Դեմիրճյանի մասին տիկին Ռիմայից: Նա ինձ մի օր հրավիրեց թանգարան, որտեղ ավելի ամբողջացավ մեծ հայի կերպարը եւ իսկույն ծնվեց նրան նվիրված բանաստեղծությունս: Նա բացառիկ անհատականություն էր: Տեղին է բնութագրել նրան անվանի բանաստեղծուհի **Սիլվա Կապուտիկյանը**. «Կարեն Դեմիրճյանն ավելին էր, քան ժողովրդի սիրեցյալ զավակը, ավելին էր, քան կուսակցության առաջին քարտուղարը, քան Կարեն Շինարարը, քան Ազգային ժողովի նախագահը, ավելին էր, քան՝ ինքը: Նա առաքյա՜լ էր»:

Այդ բանաստեղծությունը Կարեն Դեմիրճյանի կյանքը, գործը եւ հիշատակը հավերժացնող չափածո մի հուշարձան է, որը մեզանում ամուր պիտի պահի մեր արժանապատվությունը եւ անմեռ պատմական հիշողությունը:

Զրուցեց՝ ՌԱԶՄԻԿ ԽԱԼԱԹՅԱՆԸ

Իրինա Զուցովա. Վրաստանի հայկական ժառանգության ուսումնասիրողը

⇨4 -Ամուսինս՝ Կոնստանտին Վարոսի Ենգոյանը (1927-1999), ծնվել է Գյումրիում, սակայն մի քանի շաբաթ անց մայրը՝ Նազիկ Ալեքսանդրի Հայրապետյանը, առաջնեկի հետ վերադարձել է Թբիլիսի, որտեղ բնակվում էր նրանց ընտանիքը: Հայրը՝ Վարոս Բարսեղի Ենգոյանը, տեղափոխվել էր Թիֆլիս 1910-ականներին Ախալցխայից, ուր նրա նախնիները 1840-ականներին տեղափոխվել էին Թուրքիայից: Դպրոցն ավարտելով ոսկե մեդալով՝ 1945 թվականին Կոնստանտինը մեկնել է Մոսկվա եւ ընդունվել Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ: Նա մեծ սիրով էր հիշում այդ շրջանը եւ կարոտով էր խոսում: Նրան դասավանդել են այնպիսի մեծանուն պատմաբաններ, ինչպիսիք էին Եվգենի Տարլեն, Ալբերտ Մանֆրեդը, Վսեւոլոդ Դուրդենեւսկին եւ ուրիշներ: Ջմռանը ծնողները Թբիլիսիից արկղերով մրգեր էին ուղարկում նրան (հազվադեպ բան այն ժամանակվա Մոսկվայում), որոնք Կոնստանտինը բաժին էր հանում նաեւ ընկերներին:

Դիպլոմ ստանալուց հետո՝ որպես միջազգային իրավաբան եւ Ֆրանսիայի մասնագետ, նա վերադարձել էր Թբիլիսի եւ աշխատել որպես միջազգային լրագրող «Վեչերնի Տբիլիսի» եւ «Զարյա Վոստոկա» թերթերում: Հիանալի տիրապետում էր ֆրանսերենին: Լինելով Վրաստանի վաստակավոր լրագրող՝ նա գրել է տարբեր թեմաներով հոդվածներ, ֆելիետոններ, պատմական ակնարկներ, կատարել հարցազրույցներ, այդ թվում՝ ֆրանսիացի կոմունիստների առաջնորդ Ժորժ Մարշեի եւ կինոաստղ Բրիժիտ Բարդոյի հետ: Լինելով մեծապես կրթված եւ խորաթափանց՝ նա մեծ հարգանք է վայելել հասարակության մեջ եւ մասնագիտական շրջանակներում: Մի քանի անգամ հրավիրվել է աշխատելու Մոսկվայի կենտրոնական թերթերում, սակայն հրաժարվել է՝ չցանկանալով թողնել մորը եւ հայրենի քաղաքը: Իր կարիերայի ընթացքում գրել է ավելի քան տասնմեկ հազար նյութ: Մենք ծանոթացել ենք 1966 թվականին, «Վեչերնի Տբիլիսի» թերթի խմբագրությունում եւ շատ չանցած՝ ամուսնացել: Մեր դուստրը՝ Ալդան, շատ առումներով գնացել է հոր ճանապարհով՝ դարձել է տնտեսագիտության դոկտոր եւ զբաղվում է նաեւ լրագրությամբ ու Ֆրանսիայի պատմությամբ...

Հայրենի եզերքներից բաղված ստեղծագործություններ՝ կոմպոզիտոր Խաչատուր Մարտիրոսյանից

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*Օրերս լրացավ անվանի կոմպոզիտոր, ջութակահար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Խաչատուր Մարտիրոսյանի** ծննդյան 82-ամյակը: Եվ սա լավագույն առիթն է ներկայացնելու իր կյանքը բոլորանվեր երաժշտությանը նվիրած անձի կյանքն ու գործը: Խ. Մարտիրոսյանի ստեղծագործությանը ծանոթացել եմ վերջին տասը տարիների ընթացքում տարբեր համերգների շրջանակներում հնչած երկերն ունկնդրելով: 2016-ին էր, որ Հայ կոմպոզիտորական արվեստի յոթերորդ փառատոնին աշխարհահռչակ ջութակահար **Սերգեյ Խաչատրյանի** կատարմամբ առաջին անգամ հնչեց Խ. Մարտիրոսյանի Կոնցերտ-ֆանտազիան՝ ջութակի եւ նվագախմբի համար: Ամիսներ անց **Հարություն Թոփիկյանի** ղեկավարությամբ Երեւանի կամերային երգչախումբն իր հոբելյանական համերգին ներկայացրեց Խ. Մարտիրոսյանի աշխատանքային երգերի շարանից «Սանդի երգը»:*

*Նույն տարում կայացավ եւս մի պրեմիերա. «Արեւի կարոտը» երգաշարը՝ արդի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների կողքին հնչեցրեց Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը՝ հեթանոս պաշտամունքից մինչեւ մերօրյա խորհրդապաշտության հունչերը երգչուհի **Հասմիկ Ասատրյանի** ձայնով հասցնելով ունկնդրին:*

Հայ կոմպոզիտորական դպրոցի ավանդույթները պահպանելով՝ Խ. Մարտիրոսյանը ներկայի մեջ վերականգնել-վերստեղծել էր հնոց գեղագիտության կնիքը կրող, բայց եւ արդի երաժշտական մտածողության սահմաններում տեղավորվող երկեր, ինչն էլ թույլ է տալիս ասելու, որ այդ ստեղծագործությունները կարելի դասել նույն դպրոցի ներկայիս ձեռքբերումների շարքը:

-Հայ մարդու մտորումներն են, առօրյա ուրախությունները, կարոտալի զեղումները, անցյալի կորուստների ու դժվարությունների վերապրումները եւ դեպի լույսը ձգտումն ու տենչը,- իր այս ստեղծագործության մասին է խոսում հեղինակը:- Անձնազոհ պայքարի մասին է նաեւ, մեր հուշարձանների խորհրդի, հաղթանակի ու ազգի հարատեւության: Տիեզերական լուսատուն էլ ջերմություն է բաշխում երկրին ու մարդուն եւ պատգամում՝ պայքարի միջոցով ձեռք բերվածը սերունդներին փոխանցել:

Հաջորդիվ խոսեմ սիրո անհասանելիության զգացողությամբ երեք ռոմանսների մասին, որ լսել եմ «Տաղարան»-ի մեկ այլ համերգին: Անշեջ կրակը սրտում պահած դիցուհու հանդեպ անմարմնական սիրո մասին են կոմպոզիտոր Խ.Մարտիրոսյանի բանաստեղծական տողերը («Շողում է աստղը երկնքում»), որոնց հենքի վրա էլ հյուսել է իր ռոմանսը: Հուզական շնչով երաժշտական պատում է տարիք չհարցնող զգացմունքի մասին՝ անհասանելիությունից գուցե ծնված դրամատիկ շնչով: Թեքեյանի խոսքերով երկու ռոմանսներն էլ՝ նույն կոմպոզիտորի հեղինակությամբ, դարձյալ անհաս սիրո զգացմունքից ծնված գործեր են («Ասուպներ», «Փափագ»): «Ձայն հեռուեն պաշտեի»՝ ոգորում է սիրահարը. քնքշության ծարավի միայնակ դեգերուն հոգու անձկալի կանչն են թե՛ բանաստեղծական տողերը, թե՛ դրանց հենքի վրա գրված ռոմանսները:



Յոթը թիվը խորհրդանշական է Խ. Մարտիրոսյանի համար. 7 ուսուցիչ է ունեցել, անցել է 7 անհատի արվեստի «դպրոց»: Առաջինն իր հայրն էր՝ ջութակահար, ֆրանսերենի ուսուցիչ Վարդան Մարտիրոսյանը: Իրանից հայրենադարձվելով՝ ուսանել է, նախ, Սուրեն Մարդանյանին, ապա՝ տարբեր մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ Աթանես Մատինյանին, Ստեփան Զրբաշյանին, Երեւանի կոնսերվատորիայում՝ ջութակահար՝ Հրաչյա Աբաջյանին, Էդվարդ Միրզոյանին, Գրիգոր Եղիազարյանին:



-Կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնում սովորելուն զուգընթաց աշխատում էի Հեռուստատեսության եւ ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբում՝ որպես ջութակահար,- հիշում է Խ. Մարտիրոսյանը:- Այն ինձ համար «դարբնոց» էր. հայկական եւ արեւմտաեվրոպական բազմաթիվ ստեղծագործությունների կատարումներ, ձայնագրություններ «Ոսկե ֆոնդի» համար, մասնակցություն համերգների՝ Օհան Դուրյանի, Ռաֆայել Մանգասարյանի, Հակոբ Ոսկանյանի, Վարդան Այվազյանի, Չարեքյանի, Քաթանյանի, այլոց ղեկավարությամբ:

1974-ին նրան հրավիրեցին դասավանդելու կոնսերվատորիայի ժողստեղծագործության կաբինետում՝ որպես ժողովրդական երգերի եւ գործիքային նվագների վերծանության դասատուի: Համարվում է, որ Մարտիրոսյանի թողած ամենամոնումենտալ հետքը հայ մշակույթում չորս տասնամյակների ֆոլկլորագիտական գործունեությունն է: Նա շրջել է Հայաստանի տարբեր շրջաններով՝ գրի առնելով եւ նոտագրելով 4000-ից ավելի ժողովրդական նմուշներ: Նրա կազմած «Անի 1» ժողովածուն եւ բազմաթիվ հրատարակված երկերը հայ երաժշտագիտության իսկական հարստությունն են, ինչի համար նա արժանացել է ՀՀ Մշակույթի նախարարության ոսկե մեդալի: Այն տարիներին հավաքած պաշարն էր, թերեւս, հիմք հանդիսացել իր բազում ստեղծագործությունների, մասնավորապես՝ «Հայրենի եզերք» վոկալ-սիմֆոնիկ շարքի արարման համար: Աշխատանքային երգերի այդ յուրօրինակ շարանում ինձ համար հայտնություն էր «Սանդի երգը»: Խաղաղ օր, լույս ու ջերմությամբ լեցուն գյուղամեջ տեսլացավ ինձ այն ունկնդրելիս. սանդ են ծեծում, աշխատանք ու բնություն են գովերգում, արարում եւ կյանք: Չի հասցնում մարել մի բակ ու տնից եկող երգեցողության ձայնը, նրա վերջին ակորդներին միանում է կողքի բակ ու տնից եկող նոր երգը, ու այդպես միահյուսված կառուցվում է նաեւ երգչախմբի ձայնը... Հարազատ, ականջահաճո եւ շատ հայեցի է այն, ինչ պատմվում է այս գործում. հուշ չէ միայն, հայ հին կյանքի կարոտ ու կանչ չէ զուտ, այլ երազ ու ապագա խաղաղ կեցության տեսլական...

-Ուսանողների հետ Հայաստանի շրջաններում հավաքել-ձայնագրել եմ ժողովրդական- աշուղական երգեր եւ գործիքային նմուշներ, վերծանել ու նորոգել դրանք,- պատմում է կոմպոզիտորը:- Շուրջ չորս տասնամյակի ընթացքում ավելի քան չորս հազար նմուշ եմ հավաքել, վերծանել, պատրաստել հրատարակման: Միայն Անիի շրջանից քաղած նյութերի հիման վրա չորս հատոր է հրատարակվել: «Հայրենի եզերք» վոկալ-սիմֆոնիկ շարքը՝ մեներգչի, երգչախմբի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար, խմբերգային մշակումների փունջ է, որ ստեղծել եմ շուրջ քառասուն տարի առաջ ժողովրդական երգերի՝ իմ վերծանությունների հենքի վրա: Այն կազմված է երեք մասից՝ «Աշխատանքային երգեր», «Ծիսական երգեր», «Շուրջպարեր»-խաղիկներ, եզրափակվում է «Զուլո» կատակերգով: Յուրաքանչյուր մասում հատուկ ընդգծվում է տվյալ ժանրին բնորոշ մետրոռիթմն ու տեմպային առանձնահատկությունը. իր զգացմունքայնությամբ եւ նրբագեղությամբ գործն ունկնդրին պատկերացնում է տալիս մեր ազգային արվեստի մնայուն կերտվածքների մասին, ինչի վրա հյուսվել են եւ շարունակվում են հյուսվել հեղինակային ձեռագրեր կրող նորօրյա ստեղծագործություններ:

Իմ ստեղծագործություններում հարազատ եմ մնացել հայկական լադա-ինտոնացիոն կառույցին եւ ավանդույթներին,- ընդգծում է կոմպոզիտորը,- աշխատել եմ ընդգծված երաժշտական «հյուսվածքով» շեշտել իմ հեղինակային մոտեցումը՝ հնարավորինս հաշվի առնելով համաշխարհային երաժշտական ժառանգության նմուշներում կոմպոզիցիոն լուծումները եւ դրանց արդիական դրսեւորումները:

Խմբերգեր՝ ժողովրդական երգերի եւ բանաստեղծությունների հիման վրա, պիեսներ՝ ժողգործիքների համար, մշակումներ եւ գործիքավորումներ, կոնցերտ՝ ջութակահարների անսամբլի համար, երգեր եւ գործիքային պիեսներ՝ էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի համար, մանուկների համար գրված երգեր... Սրանց զգալի մասի ձայնագրությունները տեղ են գտել ռադիոյի «Ոսկե ֆոնդում»: Հ. Թոփիկյանն առաջինն էր, որ անդրադարձավ իր խմբերգային ստեղծագործություններին: Հետո իր խմբերգերը կատարվեցին Տ. Հեքեքյանի, Կ. Ալեքսանյանի, Ռ. Մլքեյանի ղեկավարությամբ: Քառասունից ավելի երգիչ-երգչուհիներ, երաժիշտներ, խմբավարներ են անդրադարձել իր գործերին: Նվիրումներ ունի տաղանդաշատ երաժիշտ կատարողներին եւ դիրիժորներին: Ալտահար էդ. Տեր-Ղազարյանին է ընծայել վիոլա-պոմպոզայի եւ կամերային նվագախմբի համար գրված «Պոեմ-նվիրումը», «Զարթոնք» սիմֆոնիկ պոեմը ծոնել՝ Մինաս Ավետիսյանի հիշատակին, ալտահար Յանա Դարյանին է նվիրել ջութակի «Կոնցերտ ռապսոդիան», ջութակահար Սերգեյ Խաչատրյանին՝ «Կոնցերտ-ֆանտազիան», Հարություն Թոփիկյանին՝ «Հայրենի եզերքը», Սեդրակ Երկանյանին՝ «Արեւի կարոտը»:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Պssվhr, պssվhr կարուսել

Ոչ, այն հայտնի ընտրական կարուսելը նկատի չունենք, այլ պարզապես՝ որ գլխավորը ընտրությունից ընտրություն մեզանում կրկնվում ու այդպես էլ չի փոխվում:

ԽՍՀՄ տարիների մի հին հայտնի անեկդոտ կար, ասում էր՝ մի անգամ Ռուսիո Նիկոլայ ցարն «այնտեղից» հրաշքով արթնանում-գալիս, տեսնում է՝ դահլիճում ժողով է: Մի քանիսը նստած են վերեւում՝ բեմի վրա, մյուս բոլորը ներքեւում՝ դահլիճում: Հարցնում է՝ նրանք ովքեր են, սրա՞նք ովքեր: Պատասխանում են, որ վերեւում իշխանություններն են, ներքեւում՝ ժողովուրդը: Ասում է՝ բա իմ օրոք էլ այդպես էր, էլ ինչի՞ համար հեղափոխություն արեցիք:

2018-ին Նիկոլ Փաշինյանի շարժումը (կուզեք հեղափոխություն կոչեք, կուզեք հեղաշրջում) հաջողեց ու նրան իր քայլիստներով իշխանության բերեց նաեւ այն պատճառով, որ երկրում այդպես էլ ընտրություններով իշխանություն փոխել չէր լինում: Բայց ահա հիմա էլ, չնայած իր ու իր վարչակազմի հանդեպ կուտակված դժգոհություններին, պատմությունը կարծես թե կրկնվեց: Ստացվեց, որ ՀՀ քաղաքացի ընտրողը մեծամասամբ հավատաց ու ամենից շատ ձայն տվեց հազարամյակների Հայոց Արցախի կորստյան, տրված հազարավոր զոհերի, այդքան գերիների ու կորածների համար փաստացի գլխավոր պատասխանատուին ու Արցախի խնդրից երես դարձնողին, դեռ արցախցի մարդկանց էլ «փախածներ» կոչողներին ու չզոհվելու համար մեղադրողին, մեզ մեր պատմական ուղին, մեր արմատները, Հայոց ցեղասպանությունը, ազգային արժեքները, Արարատն ուրանալ եւ «իրական Հայաստանով», «որտեղ հաց, այնտեղ կաց» նյութապաշտությամբ ապրել թելադրողին: Եվ որ նրան ու իր ուժին մանդատ տվեց մեր 220-ից ավելի գյուղերի դպրոցների փակման, հանրակրթական ու բարձրագույն դպրոցի ապազգայնացման, Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի վերացման, բուհերի խումբ-խումբ միավորման եւ մայրաքաղաքի կենտրոնից այդ բուհերի, դրանց ամբողջ դասախոսական եւ ուսանողական համակազմի՝ քաղաքից դուրս (չգիտես ինչպես կառուցվելիք «ակադեմիական քաղաք») վտարման, Հայոց եկեղեցու գործերին հակաօրինական կոպտագույն միջամտության եւ նման ու այլ կարգի իրենց ծրագրերի իրականացման կամ շարունակման, միաժամանակ երկրում իրենց համար արդեն բրենդային դարձած թշնամանքի, պառակտման տարածման շարունակման համար:

Արդյո՞ք արձանագրված նախնական արդյունքն արտահայտում է հայ ընտրողի քվեարկության իրական պատկերը, թե՞ ոչ այդքան, դեռ գուցե կպարզվի: Բայց շատ բան իրավացիորեն ասվել ու ասվելու է ողջ ընտրական գործընթացի մասին՝ նախընտրական քարոզչության շրջանից մինչեւ արդյունքների ամփոփում, որոնք միասին կարող էին շատ բան փոխել:

Օրինակ, ՔՊ-ի քարոզարշավը սկսվել էր պաշտոնապես նախատեսված ժամկետից շատ առաջ, հիշո՞ւմ եք՝ փետրվարի 28-ից՝ «ուրախ ավտոբուսով», չնայած դրանից առաջ ու հետո էլ Հ1-ը, նրա լուրերն, ըստ էության, Նիկոլ Փաշինյանի ամենօրյա ու իր ՔՊ-ի մենաշնորհված (փոքրիկ բացառություններով) քարոզչական հարթակն էին: Դրանք հետո զուգորդվեցին ընտրությունների տարում կամ դրանց նախադռանը պետության սոցիալական քայլերով, որոնք դժվար է չգնահատել որպես իշխող ուժի յուրատեսակ եւ որոշակի ազդեցություն ունեցած նախընտրական կաշառք: Իսկ բուն քարոզչության շրջանի հետ կապված նշենք կառավարող ուժի ու նրա առաջնորդի կողմից ծավալված բուռն հակաքարոզչությունն ու հիմնական համարված մրցակիցների հնարավորությունների սահմանափակման, մրցակիցների սահմանադրական իրավունքի ժխտման («գլուխը պատովն է տալիս, որ ուզում է վարչապետ դառնալ»), նրանց «սեւացման» ու հետապնդման, արգելափակման աննախադեպ քայլերը: Գործի էր դրվել ընտրովի արդարադատության արդեն սովորական դառնալ հավակնող մեխանիզմը. ով Փաշինյանին խանգարում է, ով նրան լուրջ ընդդիմադիր կամ, այս դեպքում, մրցակից է, հանկարծ պարզվում է՝ հանցագործ է կամ գոնե իրավական որեւէ խոցելիություն ունի: Եվ չի ուշանում ասես ուղղակի ցուցումը դատարաններին (մոտավորապես)՝ «նա դեռ առնվազն տասը տարի պետք է մնա Հայաստանում», ասել է թե՝ այդքան դատապարտված պետք է լինի: Իր քարոզչական շրջագայության ընթացքում իրեն քննադատողներին, ուրիշներին վարչապետի սպառնալիքներն ու բառապաշարը, թող ներվի ասելը, ընդհանրապես հարիր չեն անգամ մի հասարակ պետական պաշտոնյային, էլ ուր մնաց՝ երկրի ղեկավար անձին ու այդպիսին մնալ ցանկացողին: Մենք Հայաստանի այսպիսի՞ ղեկավար էինք ուզում:

Ու մի բան էլ: Եթե ընտրությանը մասնակցել հավակնող մի ուժ իր նախընտրական ծրագրում հակաօրինական դրույթներ է ներառում, ԿԸՀ-ն նրա հայտը պետք է ընդունի եւ ուժին գրանցի՞, թե՞ պետք է մերժի: Իշխող ՔՊ-ն, որը որպես պետական իշխանություն պատասխանատու է ընտրական ողջ գործընթացի օրինականությունն ապահովելու եւ գոնե բարոյապես՝ այդ օրինականության օրինակ ծառայելու, իր նախընտրական ծրագրում ներառել էր Ամենայն Հայոց կաթողիկոս հեռացնելու, նոր կաթողիկոս ընտրելու եւ նման դրույթներ, որոնք նույնիսկ ոչ թե մի «հասարակ» օրենքի, այլ երկրիս Սահմանադրության ոտնահարում է թվում: Իսկ երբ օրենքը մի անգամ նույնիսկ ինստիտուցիոնալ մակարդակով խախտվում է, այն հետո կարող է ընդունված գործելակերպ դառնալ: Ու նաեւ լինել «յօրինակ այլոց»:

Ալլախոհ ադրբեջանցին հայերիս խորհուրդ է տալիս...

Ալիեւյան բռնատիրությունից ճողոպրած ու Եվրոպայում ապրող ադրբեջանցի մի բլոգեր՝ Ռուսլան Ջալիլով անունով, չորեքշաբթի կեսօրին հայաստանցի ընտրողներիս համացանցային հաղորդմամբ թաքնված հարցերիս ինձ ասաց, որ Ադրբեջանի ներսում ինքն ինչպես է ապրում, ինչպես է գործում, ինչպես է ինքն ինքնարտահայտվում, ինչպես է ինքն ինքնարտահայտվում ադրբեջանցի ալլախոհ մարդը

«Փաշինյանն այլեւս չի հանդուրժում այլախոհությունը»

⇨1 **Շվեյցարական «Նոյե ցյուրխեր ցայթունգը»** հունիսի 8-ին հենց վերնագրում շեշտադրում է՝ «ռուսամետ կուսակցությունները պարտություն են կրել ընտրություններում», եւ ընդգծում երկրորդ կարեւոր փաստը՝ Հայաստանը մնում է արեւմտյան կողմնորոշմանը հավատարիմ: «Ի հեճուկս ղարաբաղյան պատերազմներում ձախողված արդյունքի, վարչապետն ընտրություններում իր երրորդ անընդմեջ հաղթանակը տարավ, եւ կարող է կառավարումը շարունակել: Այդու նրա ընտրազանգվածն անուղղակիորեն հավանություն տվեց հարեւան Ադրբեջանի նկատմամբ խաղաղության վիճահարույց քաղաքականությանը եւ աջակցեց Փաշինյանի՝ դեպի Արեւմուտք ռազմավարական շրջադարձին»: Բայց կա նաեւ այլ տեսակետ:

Հունիսի 8-ին ավստրիական **«Դի փրեսսե»-ն** անդրադառնալով հետընտրական պատկերին, վերնագրում արձանագրում է՝ «Պուտինը Հայաստանի ծրագրերը խափանել է՝ վարչապետ Փաշինյանի համար դժվար կլինի առանց մեծամասնական երկու երրորդի Ադրբեջանի հետ խաղաղություն կնքել»: Թեեւ Փաշինյանը հաղթեց խորհրդարանական ընտրություններում, այդուհանդերձ չկարողացավ ապահովել անհրաժեշտ մեծամասնությունը խորհրդարանում եւ պիտի երկյուղի ռուսամետ ուժեղ ընդդիմությունից, որ Բաքվի հետ հաշտեցումը մերժում է:

«ՀՀ խորհրդարանական ընտրություններն արտասահմանում հիմնականում ընկալվեցին որպես աշխարհաքաղաքական ազդեցության համար մրցավազք: Գործող վարչապետ Փաշինյանի կուսակցության՝ ընտրություններում տարած հաղթանակը նրա կառավարության ջանքերի հաստատումն է, որ Արեւմուտքի հետ ձգտում է զգուշավոր մերձեցման՝ առանց չափազանց շատ օտարացնելու Կրեմլին: Սա գրեթե անլուծելի խնդիր է Արեւելք-Արեւմուտք դիմակայության ժամանակներում», գրում է ավստրիական լրատուն:

Սակայն **«Բեռլիներ ցայթունգը»** հունիսի 8-ին մի վերլուծություն է հրապարակել, որ վերնագրում շեշտում է՝ «Հայաստանը պատժեց Պուտինին: Բայց Եվրոպան չպետք է վաղօրոք ուրախանա»: «Ռուսաստանը կորցրեց Հարավային Կովկասում իր ազդեցությունը: Բայց ՀՀ ընտրողները Բրյուսելին քվե չեն տվել, այլ պատժել են իրենց հովանավորին, որն իրենց ճակատագրական պահին լքել է»:

Շվեյցարական հանրային հեռարձակողը՝ **SRF**-ը հունիսի 7-ին՝ ՀՀ-ում նոր խորհրդարան ընտրելու օրը, մեր դիտարկմամբ գերմանալեզու միակ լրատվամիջոցն էր, որ վերնագրում ընդգծում էր. «Որքանո՞վ է կարեւոր ցեղասպանության ճանաչումը»: «Ընտրություններում կենտրոնական համարելով Փաշինյանի կառավարության եւրոպամետ հակումը եւ հարեւան Ադրբեջանի հետ խաղաղության բանակցությունները» SRF- ը նշում է, որ «հայոց մեջ ցեղասպանության դերի մասին անհամաձայնություն, բանավեճ կա: Ադրբեջանին աջակցում է Թուրքիան, որ ՀՀ-ից վաղուց է պահանջում արտաքին քաղաքական օրակարգից հանել ցեղասպանության ճանաչման հարցը: Ցեղասպանությունը հայոց պատմության մեջ դրոշմված ամենաորոշիչ իրադարձությունն է», գրում է շվեյցարական հանրային հեռարձակողը՝ ծանուցելով փետրվարին ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի Օիծեռնակաբերդ այցին հաջորդած «սկանդալային իրադարձությունների մասին, երբ Ցեղասպանության թանգարանի տնօրենն անակնկալ հրաժարական տվեց, այդուհետ վարչապետ Փաշինյանն ասաց, թե ինքն է տնօրենի հրաժարականը պահանջել: SRF- ը զրուցել է թանգարանի աշխատակից Սուրեն Մանուկյանի հետ, որ մեջբերել է վարչապետի բացատրությունը, թե «տնօրենի նվիրած ցեղասպանության մասին պատմական գրքերը վնասում են հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացին»: «Այժմ մեր կառավարությունն ակտիվորեն աշխատում է ցեղասպանության ճանաչման դեմ՝ հօգուտ խաղաղության գործընթացի», նկատել է տվել Սուրեն Մանուկյանը, որի համար «Հայոց ցեղասպանությունը կարմիր գիծ է, վերապրելը՝ հայկական ինքնության ուժեղ մասը»: Մանուկյանից տարբեր է երիտասարդ գրող, Փաշինյանի կողմնակից **Հայկ Հովյանի** կարծիքը՝ «հիմա կարեորը Թուրքիային չվրդովեցնելն է, պետք է մեր արտաքին քաղաքականությունից առանձնացնենք հուզական խնդիրները, ասում է Հովյանը, որ շեշտում է, թե ինքն էլ ցեղասպանության վերապրողների ժառանգ է: Հովյանը կարծում է, որ Փաշինյանն իր ցավոտ, բայց անհրաժեշտ գործողությունների համար արժանի է հարգանքի: Քաջություն է ժողովրդին ճշմարտությունն ասելը, նա չի թաքցնում այն փաստը, որ այժմ ստիպված ենք ցեղասպանության հարցի մասին այլ վերաբերմունք ունենալ»: Այդ է պատճառը, որ վարչապետն այդքան ցուցադրաբար աշխատանքից ազատեց տնօրենին, Հովյանի մեկնաբանությունն է ներկայացնում շվեյցարական հանրային հեռարձակողը եւ շարունակում՝« կառավարության քննադատները պաշտոնանկությունը համարում են եւս մեկ ապացույց այն բանի, որ այլեւս չեն հանդուրժում հանրային այլախոհությունը: Փաշինյանի բազմաթիվ հակառակորդներ վերջերս բանտարկվել են կասկածելի հանգամանքներում: Նախկինում լիբերալ գործչի, ժողովրդի հույսի դերակատար Փաշինյանն այժմ հաճախ է համառ եւ բռնապետական վարք ցուցադրում»:

SRF-ը հոդվածի եզրափակիչ մասում ներկայացնում է քաղաքագետ **Տիգրան Գրիգորյանի** կարծիքը, որ արտերկրից ավելի մեծ ճնշում է պահանջում: «Փաշինյանի ԵՄ բարեկամներն աչք են փակում, քանի որ նրանք տեսնում են, որ այլընտրանքն ավելի վատն է՝ ռուսամետ ընդդիմությունը բացահայտ խոսում է ժողովրդավարության կազմաքանդման մասին: Սակայն ընտրություններում Փաշինյանի հաղթանակը կամրապնդի միայն նրա ավտոկրատական հավակնությունները»: Լավ նշան չէ, որ Փաշինյանը ցեղասպանության զգայուն հարցի վերաբերյալ ճնշում է գործադրում այլախոհների նկատմամբ», եզրափակում է SRF-ի հոդվածագիրը (Calum MacKenzie):

Ճանապարհ, որն սկսվեց լսարանից

Չորս տարի առաջ՝ սեպտեմբերի մեկին, միասնական քննություններից հոգնած ու մի փոքր անհանգիստ, ես առաջին անգամ մտա Հայկական պետական մանկավարժական համալսարան-ի Կուլտուրայի ֆակուլտետ՝ լրագրության բաժին: Այդ օրը դեռ չէի պատկերացնում, թե իրականում ի՜նչ մեծ, բազմաշերտ ու պատասխանատու աշխարհ եմ մտնում: Թվում էր՝ պարզապես ընտրել եմ մասնագիտություն, սակայն տարիների ընթացքում հասկացա, որ լրագրությունը միայն մասնագիտություն չէ. այն մտածողություն է, վերաբերմունք մարդկանց, հասարակության ու ճշմարտության նկատմամբ:

Առաջին կուրսի օրերից ամեն ինչ նոր էր՝ լսարանները, մարդկանց ձայները, առաջին առաջադրանքները, անհանգիստ փորձերը: Բայց հենց այդ ընթացքում լրագրության հանդեպ իմ հետաքրքրությունը սկսեց վերածվել իրական սիրո: Այդ ճանապարհին առանձնահատուկ դեր ունեցավ մեր կուրսղեկը՝ Հակոբ Ավետիքյանը:

Նրա դասերը սովորական դասախոսություններ չէին: Նա պատմում էր, վերլուծում, բացատրում, եւ յուրաքանչյուր թեմա կենդանանում էր լսարանում: Երբ խոսում էր լրագրության մասին, թվում էր՝ աչքերիդ առաջ բացվում է մի ամբողջ աշխարհ՝ իր պատասխանատվությամբ, դժվարություններով ու գեղեցկությամբ: Նրա հետ զրույցները հաճախ հիշեցնում էին հանրագիտարանի էջեր թերթելը յուրաքանչյուր միտք նոր գիտելիք էր, յուրաքանչյուր պատմություն՝ փորձի փոխանցում:

Այս տարիների ընթացքում ես հասկացա, որ լրագրող լինելը միայն հարցազրույց վերցնելը կամ նյութ գրելը չէ: Դա մարդկանց լսելու կարողություն է, ցավը զգալու, փաստը ճշտելու, խոսքը պատասխանատվությամբ օգտագործելու արվեստ: Եվ այս ամենի հիմքում կանգնած են այն մարդիկ, ովքեր սովորեցնում են ոչ միայն մասնագիտություն, այլեւ՝ փոխանցում արժեքներ:

Այսօր, ավարտելով համալսարանը, հետ եմ նայում անցած ճանապարհին ու հասկանում, թե որքան կարեւոր են եղել այդ տարիները: Դրանք լի էին փորձություններով, անքուն գիշերներով, ստեղծագործական որոնումներով, բայց նաեւ՝ հաղթանակներով, ձեռքբերումներով ու մարդկային ջերմությամբ:

Եվ այսօր ուզում եմ պարզապես շնորհակալություն ասել իմ դասախոսներին, հատկապես իմ վարպետին: Շնորհակալություն՝ փոխանցած գիտելիքի, համբերության, հոգատարության եւ այն վստահության համար, որը տարիների ընթացքում ձեւավորեց ոչ միայն ապագա լրագրողի, այլեւ ավելի գիտակից մարդու: Որոշ ուսուցիչներ պարզապես դասավանդում են, իսկ որոշները՝ ճանապարհ են հարթում: Այս պատմությունը հենց այդ մարդկանց մասին է:

ՄԻԼԵՆԱ ԱՐԹԵՆՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության բաժնի շրջանավարտ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 11.06.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրւում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: